Արմենիա Ինշուրանս

# ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

| | | N | Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը | Ապահովադրի կողմից ներկայացվող (հայտարարվող) տեղեկությունների ցանկը |
|---|---|---|---|---|
| Ապահովադրի վերաբերյալ | Ֆիզիկական անձանց համար | 1 | Անձը հաստատող փաստաթուղթ | 1. Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցե,<br>2. Ապահովադրի փոստային հասցե,<br>3. Ապահովադրի հեռախոսահամար,<br>4. Ավտոբուս (ներառյալ միկրոավտոբուս) տեսակի Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքում՝ Ավտոտրանսպորտային միջոցի՝ առանց վարորդի նստատեղի հաշվարկված նստատեղերի քանակ՝ տեխնիկական տվյալների համաձայն,<br>5. Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակ,<br>6. ապահովագրության ժամկետ,<br>7. ապահովագրավճարի վճարման նախընտրելի կարգ և ժամկետ: |
| | | 2 | ՀՀ քաղաքացիների դեպքում, եթե ներկայացված անձը հաստատող փաստաթուղթը չի պարունակում հանրային ծառայությունների համարանիշ, ապա այդ համարանիշը պարունակող փաստաթուղթ (սոցիալական ապահովության քարտ կամ համապատասխան տեղեկանք) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք | |
| | Իրավաբանական անձանց համար | 1 | Հարկ վճարողի հաշվառման համարը պարունակող փաստաթուղթ | |
| | Այլ սուբյեկտների համար | | | |
| Ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) վերաբերյալ | | 1 | Հաշվառման (գրանցման) վկայագիր կամ այլ համարժեք փաստաթուղթ կամ մաքսային հայտարարագիր և Օրենքի 5- րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, լիզինգի պայմանագիր և այլն), եթե հաշվառման (գրանցման) վկայագրով 2 կամ այլ համարժեք փաստաթղթով կամ մաքսային հայտարարագրով ԱՊՊԱ պայմանագիր կնքելու իրավասությունը չի հաստատվում: Այլ անձին սեփականության իրավունքի փոխանցման գործընթացում գտնվող Ավտոտրանսպորտային միջոցների գծով ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար հաշվառման (գրանցման) վկայագրի փոխարեն ներկայացվում է իրավասու պետական մարմնի կողմից տվյալ Ավտոտրանսպորտային միջոցին հատկացված հաշվառման համարանիշը | |
| | | 2 | Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կամ 3- րդ մասով սահմանված անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, լիզինգի պայմանագիր և այլն) | |
| Ներկայացուցչի վերաբերյալ | | 1 | Անձը հաստատող փաստաթուղթ | |
| | | 2 | Ապահովադրի կողմից տրված հասարակ, գրավոր ձևով կազմված լիազորագիր | |

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԵՐԱԿՆՔԵԼՈՒ (ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ) ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ԱՊՊԱ պայմանագիր կնքելու համար՝ բացառությամբ այն փաստաթղթերի, որոնցում տեղի չեն ունեցել որևէ փոփոխություններ: